## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

### 07.05.2026 թ. կնքված N ԵՔ-ԳՀԱՇՁԲ-26/59-2 գնման պայմանագրի

ք. Երևան «02» « 07 » 2026թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Վ.Պապիկյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՄԻԼԼԵՆԻՈՒՄ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ս. Զարգարյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև` Կապալառու), մյուս կողմից, երկուսը միասին` (այսուհետև` Կողմեր), ղեկավարվելով Գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ և հիմք ընդունելով 07.05.2026 թ. կնքված N ԵՔ-ԳՀԱՇՁԲ-26/59-2 գնման պայմանագրի (այսուհետև` Պայմանագիր) 8.6 կետը և Երևանի քաղաքի **Նոր Նորք** վարչական շրջանի կողմից ներկայացված գրությունը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

### 1. Համաձայնագրի առարկան

Հետագա համագործակցության նպատակով կողմերը որոշեցին՝

1.1 Պայմանագրի` **Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի 8-րդ զանգված 35 և 36 շենքերի հարակից տարածքի բարեկարգման աշխատանքների** ժամկետը երկարաձգել մեկ անգամ 20 օրացուցային օրով:

### 2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած Կողմերի իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

### 3. *Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի փ. 1
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
ՀՀ 900032098528
ՀՎՀՀ 02593108

Վ.Պապիկյան ----------------------------
(ստորագրություն)
Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

«ՄԻԼԼԵՆԻՈՒՄ» ՍՊԸ
ք. Երևան, Շենգավիթ,
Բագրատունյաց փ. 11շ., 27 բն.
«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ
ՀՀ 2500011607880100
ՀՎՀՀ 02289175

Ս. Զարգարյան----------------------------
(ստորագրություն)
Կ.Տ.